

ՓԱՇՏՆԵՐ ՄՇԱԿԵԼՈՒ ՆԱՄԱՐ  
ԱՄԵՆԱԽԵԼԱՅԻ ՄԻՔԱՑՆԵՐ.  
(Շարունակորդին) \*

2.

Փողոցային փողի- այնպիսի լաւ պարարտացնելու միջոց, ինչպիսին փարախների աղբն է, կարող է համարուել նաև փողոցային սուլորակն փոշին, օգտակար մանաւանդ այն տեղերի համար, որտեղ սեւահող են արտերը. այդպիսի տեղերի համար այս վերջին միջոցը ամենանպատակալարմարն է: Փոշին պէտք է հաւաքել տարուայ չոր եղանակներին լայն փայտեայ թիակներով ձանապարհներից և գիւղական փողոցներից: Գաշտ պէտք է կրել ամառուայ մէջ, սովորաբար հարօտի (паровое поле) առաջին վարից յետոյ, փռել դաշտի երեսին, որքան կարելի է հաւասար կերպով և անպատճառ այն ժամանակ, երբ եղանակը հանգարտ է, որից յետոյ իսկոյն պէտք է երեսանց վարել կամ տափնել ցրուած փոշին:

Փոշին լաւ պարարտացնելու միջոց է ամեն տեսակ դաշտերի, բայց աւելի օգտակար է՝ ուստի սպառու եղած, սեւահողով առատ արտերը կարգի բերելու համար, որովհետև փոշիով պարարտացրած արտի հացաբոյսերը չեն թեւում կամ տարածուած գետնի երեսին, ինչպէս այդ սովորաբար լինում է աղբից: փողոցային փոշին շատ լաւ միջոց է նաև բանջարանոցները պարարտացնելու համար, մանաւանդ աւելի օգտակար է ցանել այն արդէն դուրս եկած սոխի մարգերի երեսին: Այս դեպքում պէտք է բաւականին շատ ցանել փոշին, մտաւորապէս երկու մասի հաստութեամբ, և ապա իսկոյն ջրել, որպէս զի քամուց այս և այն կողմ շարուի: Այս կերպ փոշի ցանած մարգի սոխը աւելի խոշոր, թարմ և համեղ կլինի: Ար կարիք կայ հողածուխի և չի գտնուում, եթէ փողոցները հարուստ են փոշիով, կարելի է հողածուխի տեղ գործ ածել փոշի:

3. Մարդիային արարարութիւններ, բույսերի ծնուցը, սաստիկ կենդանիների մարմինները և այլ նըման նիւթեր նոյնպէս կարող են ծառայել դաշտերի պարարտացման համար իբրև ամենալաւ միջոց: Սոցանից մի քանիսով պարարտացնելու ընդգէմ են մեր նախապաշարուած գիւղացիները, նորա կարծում են, թէ այդպիսով պղծում են արտերը և այդպէս պարարտացրած արտերի հացը զգուսնք կպատճառէ մարդուն ուտելիս, Ի հարկէ անհիմն է այդպիսի գաղափարը, որովհետև ամենայն պարարտացումն նիւտում է հողի մէջ մաքուր կեր-

պով և բոյսերը ծծում են իւրեանց մէջ ոչ թէ աղբային կեղտոտ, այլ փոխուած, զտուած հողային մաքուր հիւթը: փորձով և սպառուցուած է, որ այդպիսի արտերից ստացած հացը ոչ գէշ հոտ է ունենում և ոչ վատ համ: Կարելի է խորհուրդ տալ մանաւանդ այդ միջոցներով աղբելու կանեփի, վուշի և աւուշտի արտերը: Բայց աւելի լաւ է անցնենք պարարտացման աւելի քիչ ծանօթ, կամ ճիշտն ասած մեր գիւղացիներին բոլորովին անծանօթ, եղանակների նկարագրութեանը:

4. Ոսկրի փոշին հողեր պարարտացնելու ամենաթանկ տեսակին է պատկանում: Աւերջին ժամանակի փորձերը ցոյց են տուել, որ նրանից օգտուում են սիսեռ կամ բակլայ և նման բոյսեր ցանած հողերը: 100 ֆ. այսպիսի փոշու մէջ զրտնում է 20-25 ֆ. լուսածնական թթուում (фосфорная кислота), 30 35 ֆ. կիր և մաղնիզիա և 3-4 ֆ. ազոտ, Յորենի, հաճարի և սիմիդրի 100 ֆ. այլերի մէջ գտնուում է 45,50 ֆ. լուսածնական թթուում (фосфорная кислота), Այս պատճառով ոսկրի փոշին օգտակար կարող է լինել նաև հացահատիկների համար, ննթագրում են, որ ոսկրի փոշու մի փունտը փարախներից ստացած աղբի 20-30 ֆ. հաւասար ոյժ ունի: Ոսկրի փոշիով պէտք է պարարտացնել պտղաւետութեամբ միջին տեսակի հողի շերտերը, և ոչ թէ գարնանային, այլ աշնանային ցանքների ժամանակ, որովհետև նա լուծուում է աւելի դանդաղ, քան օրինակ թռչնոց ծիւտը. այդ պատճառով աւելի օգտակար կլինի խառնել մանաւանդ աշնանացանի հացաբոյսերի սերմերի հետ: Յաճախ կարող է պատահել, որ նա քիչ օգտակար լինի այն մարգագետինների համար, որոնց մէջ լուսած խոտը ցանովի է, երբ սոքա հարուստ են կրով և մանաւանդ, երբ հողի շերտը իր մէջ շատ ծծմբաթթու է պարունակում:

Պարարտացնելու համար գործածուելիք ոսկրի փոշին պէտք է կոյտ շինել, վերան ջուր ցանել և թողնել, որ ինքը տարածուի այս և այն կողմ:

Գեռ հարիւր տարի սրանից առաջ Անգլիայում զգացին ոսկրով պարարտացնելու անհրաժեշտութիւնը: Այդ ժամանակուանից սկսեցին ամեն տեղից ոսկրներ հաւաքել, մինչև՝ անգամ փորում էին դաշտերի այն հողերը, ուր պատերազմներ էին տեղի ունեցել: Ահա այս աչքի առաջ ունենալով, չպէտք է թող տալ դուրս տանելու իւրաքանչիւր երկրի մէջ հաւաքուած ոսկրները մի ուրիշ երկիր, որովհետև զրանից վնասուում է երկրագործութիւնը: ինչպէս նկատուած է, մէկ ոսկրը կարող է 10 ֆ. հացահատիկ արտագրել, Ռուսաստանից մեծ քանակութեամբ ոսկր է արտահանում: 5. Այժմ նկարագրենք յայտնով պարարտացնելու եղանակը:

Յարդը իր նիւտուած դրութեամբ ամենայն

\* Shu Urumia 1899 p. 7. և 7. հր. 133:

տեսակ հողի համար պարարտացման ամենալաւ միջոցն է համարուում: Այդ պատճառով աշխատում են, որքան կարելի է, շատ յարգ փոել ընտանի անասունների տակ և ապա հաւաքելով աղբի հետ միասին բոլորովին փոսեցնում են: Յոգնած արտերի համար երբեմն մենակ յարգով պարարտացնելն իսկ օգտակար է: Այսպիսի դէպքերում մի դեստակին հողի համար դեռ աշնանը պէտք է գուրս տանել մօտ 30 սայլ յարգ և հաւասարապէս ցրուել դաշտի երեսին: Այսպէս ամբողջ ձմեռը ձեան տակ մնալով գարնանը կվարուի ստվորական աղբած արտի նման: Երկիրը, ամբողջ մի քանի ամիս յարգի տակ մնալով, փխրուն է դառնում և միշտ մաքուր է մնում անպէտք խոտերից: Այնուամենայնիս այս կերպ յարգով պարարտացնելը ունի և իր վատ կողմերը: Նկատուած է, որ առանձնապէս հացահատիկների համար զանազան վնասակար միջատներ բազմանում են այն յարգի մէջ, որով դաշտը մի քանի ամիս ամբողջապէս ծածկուած է լինում: այդ միջատները վերջը փշացնում են ցանքերը: Այդ պատճառով այն տեղերում, ուր շատ կայ դաշտային եղջերուածի, այս եղանակի պարարտացումը անպէտք է և դեռ մինչև իսկ վնասակար:

Ծառերի տերևներն ևս, եթէ հնարաւոր է նոցանից շատ ձեռք բերել, կարող են գործածուել նոյնպիսի պարարտացման համար: Ընչպիսին է յարգը և մինչև անգամ սրանից էլ օգտակար կարող են լինել, որովհետև փոսած տերևների մէջ աւելի քիչ վնասակար կենդանիներ են գոյանում: Աշնանը ծառերից թափուած տերևները պէտք է գործածել այնպէս, ինչպէս յարգը: Ամենայն տեսակ տերև կարելի է գործածել, բացի փշատերևներից որոնք անպէտք են: Նրանք լաւ չեն փոսում և երբէք չեն լաւացնում վարելահողը:

Ար որ շատ կան սաղարթալից անտառներ, իսկ յարգը թանգ է, այդպիսի տեղերում երբեմն ծառերից թափուած տերևները գործ են ածում անասունների տակ իրրե փոսածք և երբեմն էլ խառնում են աղբի հետ: Անասունների համար այդ խկապէս վնասակար է: Աշնան վերջերը համարեա երբէք չի յաջողում հաւաքած տերևները լաւ չորացնել, իսկ խոնաւութեան պատճառով յառաջացած տաքութիւնից լլքում է փոսածքը, որ հակառողջական է կովերի համար: Այդ պատճառով ամենից լաւ է տերևները ուղղակի յարգի նման կրել դաշտ և գործ չածել իրրե փոսածք:

6. Հողածուխը (տորփն) ամենայն տեսակ հողի համար պարարտացնելու ամենահիանալի միջոցն է համարուում, որովհետև ոչ միայն նորօգուում է երկիրը, այլև պահպանում է երաշտից: Բայց պէտք է աչքի առաջ ունենալ մի կարևոր կանոն, պարար-

տացնելու համար երբէք գործ չածել միայն հողածուխ \*; այլ անպատճառ պէտք է խառնել մոխրի, կրի և կամ աղբի հետ:

Գաշտերը պարարտացնելու համար հողածուխը պէտք է այսպէս գործ ածել: Ծահճից գուրս բերելուց յետոյ պէտք է հենց տեղն ու տեղը լճի արիում չորացնել, չոր կտորները մրձով շատ մանրել և դաշտում կոյտ կազմել: ապա հողածուխի հետ լաւ խառնել կիր կամ մոխիր (սովորաբար մի փութ մոխիրը 20 փութ հողածուխի հետ) և փոել դաշտում հաւասար կերպով և ապա երեսանց վարել:

Երբ հողածուխը գործ են ածում դաշտերում միայն երաշտութեան դէմ և աւելացնելով պարարտացնելու համար գործածուելիք աղբի և կամ սևահողի վերայ, այդպիս դէպքերում պէտք է քիչ քանակութեամբ գործ դնել, միգիսեստիսի համար 6-ից մինչև 10 սայլ: Բայց երբ աղբի տեղ հողածուխով են պարարտացնում յոգնած դաշտերը, այն ժամանակ աւելի մեծ քանակութեամբ հողածուխ պէտք է գուրս բերել դաշտ՝ մի գիսեստիսի համար 50-150 սայլ, նայելով հողի տեսակին: Կաւահողով առատ արտի մէջ աւելի քիչ քանակութեամբ հողածուխ պէտք է գործ ածել, քան աւաղահողի մէջ: Հարկաւոր է յիշել, որ հողածուխը սառեցնում է հողի շերտը: այդ պատճառով ուր որ եղանակը ցուրտ է և յաճախ հացբոյսերը մրսում են, պէտք է քիչ հողածուխ գործ ածել, և այն էլ, եթէ հնարաւոր է, միայն աղբախառն: Տաք երկրներում շատ հողածուխ կարելի է գործածել, իսկ աղբը պահել կանկի արտերի և բանջարանոցների համար:

Ծահճից գուրս բերած հողածուխը միատեսակ չէ, վերին և ներքին շերտերը տարբեր են: Գաշտերը պարարտացնելու համար լաւ է գործածել ներքին շերտերը, Հողածուխի ներքին շերտերը լաւ միջոց են աղբակոյտերի երեսը ծածկելու և արտաքնոցների արձակած գարշելի հոտի առաջն առնելու համար: Բայց երաշտի դէմ գործածուելու համար աւելի յարմար են հողածուխի վերին շերտերը, որոնք իրենց մէջ չորս անգամ աւելի ձմեռու յատկութիւն ունին: քան ներքին շերտերը: Երբ ծահճներից հողածուխ են հանում վառելիքի համար, պէտք է վերցնել հողի ամենաներքին շերտերը, որոնք աւելի ուժեղ ջերմութիւն են արձակում: Նոյնպէս եթէ հողի շերտը

\* Անցիւտ սարի Ռուսաստանում կուսարում փորներ ցոյց են տուել, որ կամարի արտերից որոնք պարարտացնում են եղի կրախառն կաւով եւ անոգանիսով աւելի հացահատիկ եւ լիլ յարց և սագուել, քան սղբով պարարտացնում արտերից որոնց տուած սղբիւնի մեծ մասը յարց և եղի եւ ոչ հացահատիկ:

Համարեա աւագ է՝ քանո պս և այն կողմ տանելուց պաշտպանելու համար ամէնից լաւ միջոցն է դարձնալ հողածուխով ծածկել վերին շերտերը:

7. Հարկ եւմ համարում պստեղ յիշել նաև գաշտեր պարարտացնելու մի հասարակ եղանակ՝ կանաչ խոտերով: Փոխանակ հողը մի տարի հանգիստ թողնելու, գարունն սկսելուն պէս թնկեմ կերպով ծածկում են միայն աղբով կամ հողածուխով մոխրի հետ խառնած: և գարնանացանի նման շտապով վարում և ապա ցանում են մյուս ունկ (конекни добы) և կամ կարմիր առւշոյտ բայց աւելի լաւ է այդ երկու տեսակ բոյսերի սերմերի խառնուրդը: Երբ ցանած խոտը ծաղկելէ սկսում՝ քաղում են: Բայց չեն չորացնում և անասուններին չեն ուտեցնում: այլ հենց տեղնուտեղը, քանի զեռ թարմ է: փռում են իրրե գրովով (փոցխով) սկսածն սրտի երեսին և վարում են: Ապա երեք չորս շաբաթից յետոյ, նայած եղանակին, կրկին անգամ վարում են և աշնանը ցանում: Պարարտացնելու այս եղանակը մեծ հողագողութիւն է պահանջում: Բայց և շատ ձեռնտու է վատ հողերը կանոնաորելու համար: մանաւանդ երբ հողը ընդունակ է շատ ուժասպառ լինելու և խիստ կարծր է:

Այս կերպ պարարտացնելուց յետոյ շատ յաջող հունձ կտացուի աշնանացանքերից, մանաւանդ ցորենից: և ուր աղբը սակաւ է և հողածուխի ճահիճներ չկան, այս միջոցը հողեր պարարտացնելու ամենախելացի միջոցն է համարում: Այս կերպ պարարտացրած հողի վարուցանքսը պէտք է հետեւեալ կերպով լինի:

Առաջին տարին գարունն սկսելուն պէս պարարտացնել աղբի որոշած չափի կէս մասով և ապա ցանել առւշոյտ կամ ձիւռ ունկ վերև յիշած նկարագրութեան համաձայն: Ապա կանաչ բոյսերով պարարտացնելուց յետոյ՝ հերկում են արտը և աշնանը ցորեն կամ հաճար ցանում: Երկրորդ տարին խնամքով վարում են գաշտը և ապա ցանում վարսակ: Այնուհետև կրկնում են ցանել նոյն եղանակով առանց հանգստացնելու հողը: Եթէ ամէն բան ուշադրութեամբ այնպէս կատարուի ինչպէս ասուած է՝ աշնանացանի համար բացի հաճարից կամ ցորենից, իսկ գարնանացանի համար բացի վարսակից ուրիշ բան չցանել, և եթէ առւշոյտը չուտեցնեն անասուններին, այլ ինչպէս հարկն է ամբողջապէս վարեն՝ կարելի է ամենահիմանալի հունձ սպասել: Հաստատապէս կարելի է խորհուրդ տալ այն գիւղացիներին և մանր հողատերերին, որոնց գոմերի աղբը չէ բուսականում: այն ինչ գաշտը վաստակարեկ և ուժասպառ է՝ փորձել այս եղանակը գոնէ սկիզբնելում հողի մի փոքրիկ կտորի վերայ:

8. Մոխիրը թէև թանկ բայց լաւ միջոց է պարարտացման: Մենակ մոխիրով գաշտերը երբէք

չեն պարարտացնում: Բայց պարարտացման համար գործածելիք ուրիշ միջոցների հետ մոխիր խառնելը յաջող հետևանքներ կունենայ: և այդ անհրաժեշտ է, որովհետև մոխիրը ոչ միայն ինքն ըստ ինքեան օգտակար է գաշտերի համար, այլ և բարելաւում է ամենայն տեսակ ուրիշ պարարտացնելու նիւթեր, որոնց հետ նա խառնուած է:

Այժմ յիշենք, թէ որպիսի մոխիր աւելի օգտակար է գաշտերի համար և որպիսին ոչ: Պարարտացնելու համար ամենաօգտակար համարում է ամթարի մոխիրը: Աւր որ ամթարը իրրե վառելիք է գործածւում, մոխիրը անպատճառ պէտք է դաշտ կրել: Ամթարի մոխրից յետոյ ըստ արժէքի գալիս է յարդի մոխիրը (ամենալաւը ձիակորեկի յարդի): Ծառերից ստացած մոխրի ամենալաւ տեսակներից կարելի է համարել կէշի և բարդի ծառերինը: Քարածուխից ստացած մոխիրը գաշտերի համար այնքան էլ օգտակար չէ համարում: Վատ տեսակի մոխիր է ստացւում հողածուխից: Բայց պարարտացնելու համար գործածուելիք միւս այլ միջոցների հետ այդ տեսակ մոխիրն ևս կարող է պէտք գալ:

9. Գաշտերը պարարտացնելու համար մոխրի տեղ գործ է անւում նաև նանգած կիր: Բայց շատ փխրուն անջրդի արտերի համար, որոնք աղքատ են սեահողով կիրը անպէտք և մինչև անգամ վնասակար է: Կրով պարարտացնել չի կարելի նաև վաւշի և կանեփի արտերը: Կրից գոյանում են հողի մէջ կոշտ և կարծր թելիկներ: Կիրը ամենից աւելի պէտք կգայ յոգնած արտերի համար, կարելի է գործածել այն նաև պարարտացման համար գործածուելիք այլ և այլ նիւթերի հետ: ինչպէս մոխիրը:

10. Բազմիցս կատարուած փորձերը ցոյց են տուել, որ կենդանեաց արիւնը հողեր պարարտացնելու ամենալաւ միջոցներից մէկն է: Նախ վեր են առնում այդ նպատակաւ եօթ մաս մոխիր, յոյսքան էլ չոր հող և փոշի գարձրած հողածուխ: և ապա մի մաս էլ արիւն (օրինակ մի ձիւռ արիւն) և խառնում են իրար: որից յետոյ կտացուի ուժեղ ընտիր յատկութիւն ունեցող նիւթ, որ կատարելապէս կրատկանանայ կազդուրելու 200 ք. մետր (աւելի քան 90 ք. սաժ.) հող: Եւր կենդանին ստակում է, նրա արեան շիճուկը բաժանւում է մակարդից և արիւնը փշտում է: Բայց եթէ լուծ ենք այն երեք անգամ աւելի քանակութեամբ ջրի մէջ և իսկոյն գործածենք, այն ժամանակ ընդունակ կլինի պարարտացնելու ամենայն տեսակ հող: Կարելի է նաև չորացնել, սանդի մէջ ձեծել, փոշի դարձնել և ապա պահել այդ փոշին չոր տեղերում գործածութեան համար: Եթե՞ր գրուանքայ այդպիսի չորացրած փոշին իր յատկութեամբ կարող է հասարարուել մի ամբողջ սայլ աղբի: Այն տեղերը, ուր հողի շերտը քիչ աւազոտ է, արիւնով պարարտացնելու համար:

բարտացնելը միակ յարմար միջոցն է համարուում բոլոր եղածների մէջ .

Արիւնով կարելի է պարարտացնել նաև ծաղկամանների մէջ աճած ջերմանոցների բոյսերի հողը . Գրա համար վեր են առնում հողի վերին շերտը ապա ցանում են մի բարակ շերտ չորացրած և փոշի դարձրած արիւն . որից յետոյ ծածկում են հողով : Եթէ փոշին ուղղակի հողի երեսին ցանենք , այն ժամանակ նա հողի երեսը կրճնի և չի թողնի որ ջուրն ու օդը ներս թափանցեն հողի մէջ : Այս պատճառով սոյն եղանակով հողը պարարտացնելու համար , անհրաժեշտ է վերջը կանոնաւոր վարել :

11. Նորագոյն հետադասութիւնները ցոյց են տուել , որ երկրիս 64 բաղադրիչ մասերից լուսակիրը (փօփօրէ) համարեա ամենամեծ քանակութիւնն է կազմում : Լուսակրի շերտերի մեծ մասը երկրաբանական որոշ շրջաններում իւրեանց ծագումը ստացած են օրգանական մնացորդներից : որ յետոյ փոխուում է հանքի . Այժմ սրգէն շատ տեղերում , ինչպէս օրինակ Քրանսիայում , Անգլիայում , Իսպանիայում , Նորվեգիայում , Ալժիրում , Ռուսաստանում և այլ երկրներում դառն են տասնեակ հազար քառ. վերտ լուսակրի շերտեր : Քրանսիայի հիւսիսային կողմերում լուսակրի պարունակող աւազը մի քանի ժամանակ գործ էր ածուում ցեմենտ պատրաստելու և խճուղիների համար , իսկ Ռուսաստանում համարեա մինչև եօթանասնական թուականների վերջը լուսակիրը գործ էր ածուում փողոցները սալաշատակելու : Բայց հէնց որ գիւղատնտեսական փորձերը ցոյց տուին լուսածնային թթուատի պարարտացնող զօրութիւնը , մարդիկ աշխատեցին միայն այդ նպատակով գործադրել : Հաշուում են , որ 1894 թ . ին հողեր պարարտացնելու համար գործ է դրուած մինչև 360 միլ . փութ լուսակիր (փօփօրէ) : 2նայելով գործածուած այդ ահագին քանակութեան , երբէք չպէտք է երկիւղ կրել , որ նա մի օր կարող է սպառուել :

Թէ որչափ յիրաւի շատ է տարածուած այժմըս լուսակրի գործածութիւնը , այդ երևում է այ ինչից : Երկիրը կարող է լաւ բոյս արտադրել միայն այն ժամանակ , երբ նա լաւ խոնաւութիւն (սոբէ) պահել գիտէ և երբ նրա մէջ կայ բաւական չափով մի առանձին տեսակի նիւթ , որ կոչուում է յնալուսակիր (փօփօրիտէ) . Եթէ երկիրը խոնաւութիւն պահելու անընդունակ է , այն ժամանակ պէտք է զիտենայ , որ լուսակիրը երբէք չի կարող օգնել բերքին : Նոյն բանը կպատահի , եթէ երկիրը ընդունակ է իր մէջ պահելու խոնաւութիւն . բայց բոյսի համար անհրաժեշտ լուսակրի նիւթը ծախուած է՝ այն ժամանակ ոչ էի տեսակ անձրև չի կարող օգնել լաւ բերք ըստա-

նալու համար : Նշանակում է՝ պէտք է նայել տեղին և ըստ այնմ վարուել երկրի հետ , որ նա կարողանայ և խոնաւութիւն պահել և ունենայ հարկաւոր չափով լուսակիր : Այս նպատակին հասնելու համար պէտք է գործածել աղբ , որից երկիրը աւելի փխրուն կդառնայ և կճոխանայ , և որովհետև աղբի մէջ լուսակիր պարունակում է , այդ պատճառով էլ նա կհարստացնէ այդ նիւթով երկիրը : Ռուսաստանի մի քանի նահանգներում հողերը պարարտացնելու համար արդէն սկսել են գործադրել լուսակրախառն (փօփօրիտէ) փոշի : Գիւղացիք , որոնց աչքի առաջ է կատարուել այս կերպ նոր պարարտացումը , շատ հետաքրքիր կերպով հետևում էին գիւղատնտեսների ամէն մի գործողութեանը և արդէն շատ տեղեր իրանք սկսել են փոքր չափով գործադրել այս եղանակը : Փորձեր կատարելիս գիւղատնտեսները ցանկութիւն յայտնողներին անհրաժեշտ բացատրութիւններ և խրատներ էին տալիս , որի հետ միասին ցոյց էին տալիս թէ որտեղ և ինչպէս կարելի է ձեռք բերել այդ փոշին : Գրա համար ամէն ոք կարող է զիմել զաւառական վարչութեան , որը և ցոյց կտայ , թէ որտեղից կարելի է ձեռք բերել լուսակիր , որովհետև բարձրագոյն իշխանութեան կողմից կարգադրուած է բոլոր զաւառական վարչութեանց ամէն կերպ նպաստել գիւղատնտեսութեանը : Ինչ կլիբարների գնին , կարելի է միայն այսքանը ասել , որ լուսակիրը միշտ և ամէն տեղ երկու և դու աւելի անգամ աժան կնստի աղբից : Իւրաքանչիւր դեսեատինի հողի հետ պէտք է խառնել առ սակաւը 20—40 փութ լուսակրի փոշի , իսկ գործարաններում ծախուում է իւրաքանչիւր փութը 20 կամ 30 կոպ . : նշանակում է իւրաքանչիւր դեսեատինի համար կծախսուի մօտ 12 ուրլի և ոչ աւելի . և եթէ հաշուելու լինենք միմիայն այն ծախսը , որ նստելու է աղբը զիւղից մի վերստի չափ հեռաւորութեան վերայ գտնուող արտը տանելու համար , այն ժամանակ կհամոզուենք , որ վերջինս աւելի մեծ ծախս կը պահանջէ , քան ամբողջովն լուսակրային փոշիով կատարած պարարտացումը :

12. Մնում է յիշել պարարտացնելու այն տեսակները , որոնք թէև շատ օգտակար են հացարոյսերի համար , բայց շնորհիւ իւրեանց թափուութեան շատերի համար գործածական չեն կարող լինել : Այս վերջին տեսակի պարարտացումների այստեղ յիշելու նպատակն այն է , որ մի տեսակ ամբողջացրած լինենք պարարտացնելու բոլոր լաւ միջոցների նկարագրութիւնը Այդ միջոցները սոքա են . գամ (բառ) , յուրակ (чилийская селитра) , ձմիարբուսիկ աշակ (сѣрнокислый аміакъ) և սպիտակ փոշի կամ սնկոյ (пудрить) : Այս բոլորը փողով գնելու միջոցներ են , որոնցից կարելի է դաշտ տանել

մի դեսեատինին միայն 6-8 փութ և այն էլ ոչ միշտ: Արա վրայ պէտք է աւելացնել նաև այն, որ բոլոր այս միջոցները գործածական են միմիայն ուրիշ տեսակ պարարտացնող նիւթերի հետ խառն, նոցա աւելի ուժեղացնելու համար: Առանձին վերջրած այս թանկագին միջոցներից և ոչ մէկը այնքան էլ մեծ օգուտ չեն կարող տալ, որ հարկ լինի աղքատ երկագործներին մեծամեծ ծախքերի տակ դցել:

Իբրև եղբակացութիւն այսքանը պէտք է տեսլ, որ ոչ մի պարարտացում կատարեալ օգուտ չի կարող տալ, եթէ հողերը վատ են մշակած: Այդ պատճառով վարելահողեր բարելաւելու ամենակարևոր և ամենամահարաժեշտ միջոցը մշտապէս կարելի է համարել խնամքով և յարմար ժամանակի մշակումը: Այսպէս, օրինակ, պատահում է, որ գիւղացիները միայն յուլիսի վերջին են սկսում մշակել հարոսը՝ մի տարի հանգստութիւն վայելած հողը, որպէս զի աւելի երկար ժամանակ անասունները արօտատեղերից կարողանան օգտուել: Սա արդէն հակառակ է գիւղատնտեսական որոշ կանոնների: Արժէ արդեօք յուլիս ամսուայ մէջ արտահանել պարարտացնելու համար պատրաստ նիւթը, նա միայն կշորանայ և համարեա ոչ մի օգուտ չի կարող տալ: Այլ և ինչ յատկութիւն կարող է ունենալ աշնանացանի համար գործածուելիք այն երկիրը, որ մշակուած է միայն ամառուայ վերջերը:

Յաճախ ուշացնում են նաև գարնանային ցանքսերը, այն էլ ոչ թէ մի որևէ կարևոր պատճառով այլ միայն ճուշութեամբ: Երկիրը պարարտացնելու գործը կարևոր և անհրաժեշտ է, և այդ իսկ պատճառով մենք աշխատեցինք ցոյց տալ պարարտացնելու գլխաւոր տեսակները, Բայց աւելի կարևոր է, որ երկրագործները իրանք իմանան, թէ ինչ կերպ պէտք է վարուել հողի հետ: Առանց զրան ամենալաւ հողից անգամ, ամենայաջող պարարտացումից յետոյ, դարձեալ ոչինչ չի ստացուի:

Գ. Ղ.



### ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԱՌԱՍՊԵՆՆԵՐԸ

Մ. ԽՈՐԵՆԱՅՈՒ

#### ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՄԷՋ

(ԲՆՆԱԳԱՍՏՈՒԹԻՒՆ ԵՎ ՈՒՍՈՒԱՅԻՐ)

(Շարունակութիւն) \*

Գ.

#### ՎԱՀԱԳՆԻ ԱՌԱՍՊԵՆԸ.

Կարծեցեալ թէոզոնիս: — Մ. Էմինի կարծիքով «հայոց վէպը» սկսուել է թէոզոնիսով, շրջապատական աւանդութիւնով, դորա մէջ նանդէս էին գալիս առաջին աստուածները և նոյանից առաջացած հսկաները, որք մարտնչում էին դոցա դէմ, ինչպէս երբեմն Տիտանները — Զևսի դէմ: Այդ աւանդութեան բովանդակութիւնը, ինչպէս որ էր առհասարակ հին ազգերի մէջ, կազմում էին աստուածների ծնունդը եւ աշխարհի սկիզբը՝ 1): — Եւ այդպիսի դիցավեպի «նախերգանքն» է համարում Էմինը Սորենացու մէջ եղած Մար Աբասի պատմութեան սկիզբը (Ա. Թ.), որի մէջ խօսուում է հսկաների աշտարակաշինութեան և ին. մասին:

Թէ Էմինի այդ տեսութիւնը զուտ երեւակայական է, շատ պարզ է: Սորենացին ոչ մի տեղ չէ յիշատակած թէ, այդ հատուածը «վէպից» է առած, և կամ հայոց առասպելների հետ որևէ կապ է ունեցած այլ, ընդհակառակն, պատմագիրը պարզապէս վկայում է, թէ դա Մար Աբասի գրքի սկիզբն է: Ուրեմն Սորենացին այդ կողմ մի զրաւոր աղբիւրից է առնում և ոչ «վէպից» կամ ժողովրդական երգերից: Թէ այդ զրաւոր աղբիւրը՝ Մար Աբաս՝ Սորենացու ստեղծածն է, թէ իրօք եղել է, թէ Անանուն (Սուա Ագաթանգեղոս) է, կամ այլ ոք, — այդ արդէն ուրիշ խնդիր է: Ով էլ լինի այդ զրաւոր աղբիւրի հեղինակը, կարող էր իրենից յերկրած լինել այդ պատմութիւնը, քաղելով մի այլ զրաւոր աղբիւրից:

\* Steu. Arsurus 1899 p. համար է. եր. 200:  
 1 Էմին, Մ. Խորեն. եւ հայոց հին վեպերը, բարդեր. 36. հոս.: